



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

07.03.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԱՅ-ԱՄ-2019/32**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս
Մհեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «ԶԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյանի (պետական գրանցման
վկայականի համար՝ 273.110.1021432)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
06.02.2019թ. թիվ 27/26-3/1635-19 գրությամբ «ԶԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ
ընկերությունների կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող
մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով
ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝
Պատվիրատու) 01.02.2019թ. թիվ ԱԴ/06.3/1178-19 գրության հիման վրա, 06.02.2019թ. թիվ

27/26-3/1635-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ջի Թի Սի» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ջի Թի Սի» ՍՊԸ-ն 23.02.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ առողջապահության նախարարության թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2019/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (այսուհետ՝ Աճուրդ) 19-րդ չափաբաժնով նախատեսված՝ Վալպրոաթթու (նատրիում վալպրոատ) կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ 300մգ, valproic acid (valproate sodium) tablets coated controlled-release 300 mg դեղի համար Ընկերության կողմից ներկայացվել է Դեպաքրոն (valproate sodium (valproic acid) tablets coated controlled-release 300 mg) դեղը, որը գրանցված է եղել ՀՀ-ում 09.12.2013թ-ից մինչև 09.12.2018 թ-ը:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը տվյալ դեղամիջոցի 2019թ. մատակարարումների համար Աճուրդը հայտարարել է 10.12.2018թ-ին: Ընկերությունը նշել է, որ սա փաստում է այն մասին, որ դեղը Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված կարգով հաստատված դեղերի Գնումների պլանը կազմելիս ընդգրկված է եղել ՀՀ հիմնական դեղերի ցանկում և պետական գրանցամատյանում (ռեեստր): 17.12.2018թ. ՀՀ ԱՆ-ն կատարել է 19-րդ չափաբաժնի շտկում՝ համապատասխանեցվել են քանակները բնութագրերին, հետաձգելով մրցույթը մինչև 09.01.2019թ.:

Ընկերությունը հայտնել է, որ 2018թ. նոյեմբերի 23-ին, Դեպաքրոն դեղը վերագրանցելու համար ներկայացվել է հայտ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Դեղգործակալություն): Համաձայն՝ ՀՀ կառավարության 2001 թվականի N 347 որոշման 18.2 և 18.3 կետերի դեղի վերագրանցման գործընթացը տևում է 18 աշխատանքային օր:

Դեղի վերագրանցումը Դեղգործակալության կողմից արհեստական խոչընդոտներով ձգձգվել է:

Ընկերությունը նշել, որ Դեպաքրոն դեղը տարիներ շարունակ, բազմիցս մատակարարվել է ՀՀ առողջապահության նախարարությանը և ՀՀ-ում այլ բազմաթիվ բժշկական հաստատություններ: Առ այսօր արձանագրված չի եղել որևէ մի բողոք դեղի հետ կապված:

Աճուրդին «ԶԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է Դեպաքրոն դեղը, որը գրանցված է եղել ՀՀ-ում 2013թ-ից մինչև 2018թ-ի դեկտեմբեր ամիսը: Այդ ամբողջ ընթացքում մատակարարվել է Հայաստանի Հանրապետության բազմաթիվ բուժ հաստատություններին, ինչպես նաև պետության կարիքների՝ համար, Առողջապահության նախարարությանը՝ դեղերի կենտրոնացված կարգով մատակարարումներում՝ ներառյալ 2018թ-ը, որը 2018թ-ի նոյեմբեր ամսին ներկայացվել է վերագրանցման, ըստ գործող օրենքի և կարգի, վերագրանցման գործընթացը պետք է տևեր առավելագույնը 30 օր, որը ՀՀ Գնումների մասին օրենքով նախատեսված կարգով հաստատված դեղերի Գնումների պլանը կազմելուց ընդգրկված է եղել ՀՀ հիմնական դեղերի ցանկում և պետական գրանցամատյանում (ռեեստր), և ոչ թե Դեղերի մասին ՀՀ օրենքով նախատեսված՝ Պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղ, որը ունի ԱՀԿ նախաորակավում և /կամ/ գրանցված է Եվրոպական միության անդամ երկրներից որևէ մեկում, կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կամ Ճապոնիայում (մեջբերում 502-Ն որոշման 2.1 կետից):

Ընկերությունը հայտնել է, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից «ԶԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված 19-րդ չափաբաժնի մասով մերժման հիմք է հանդիսացել այն, որ տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի: Մասնավորապես ներկայացրել է Դեպաքրոն դեղը, որը հայտերի գրանցման օրը 08.01.19թ-ին գրանցված չի եղել գրանցամատյանում (ռեեստր):

Բացակայում է Կառավարության 02.05.2013թ-ի Թիվ 502-Ն որոշման հաստատված հավելվածի 2.1 կետով պահանջված տեղեկատվությունը:

Ընկերությունը, անդրադառնալով Աճուրդի գնահատող հանձնաժողովի մերժման հիմքին, հայտնել է, որ Ընկերությունը չի ներկայացրել դեղ ՀՀ կառավարության 23.05.2013թ-ի թիվ 502-Ն որոշմամբ սահմանված 2.1-ով կետով, այն է՝

2.1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար կատարվող գնումների պլանում կարող են ընդգրկվել նաև «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք ունեն արտադրող երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր և Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում և (կամ) գրանցված են Եվրոպական միության անդամ երկրներից որևէ մեկում կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կամ Ճապոնիայում, որ դրանից հետո էլ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հետ ներկայացվեր 2.1 կետի վրա հիմնված՝ 2.2 կետով նախատեսված տեղեկանքը, այն է՝

2.2. Սույն հավելվածի 2.1-ին կետով նախատեսված դեղերի գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մրցույթի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մատակարարը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հետ միաժամանակ պարտավորվում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեղեկանք՝

Ընկերությունը նշել է, որ վերոգրյալի մասով 2 անգամ՝ 25.01.2019թ. և 31.01.2019թ. ամսաթվերին գրավոր պատասխանել է Աճուրդի գնահատող հանձնաժողովի գրություններին:

Ավելին, նորից անդրադառնալով Աճուրդի գնահատող հանձնաժողովի մերժման հիմքին՝ Աճուրդի հանձնաժողովի 6-րդ արձանագրության, մեջբերում <<տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի: Մասնավորապես ներկայացրել է Դեպաքրոն դեղը, որը հայտերի գրանցման օրը 08.01.19թ-ին գրանցված չի եղել դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)>> ներկայացրել ենք, որ կառավարության 502-Ն որոշման 2-րդ կետը, ինչի շուրջ գնում է ողջ տարածայնությունը, սահմանում է չափորոշիչներ, որոնցով դեղերը կարող են ընդգրկվել կամ պետք է ընգրկվեն - ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՈՒՄ, որը (ԳՆՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ) հաստատված է Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված կարգով: Չափորոշիչը

Գնումների պլանում ընդգրկվելու - դեղի ընդգրկված լինելն է ՀՀ հիմնական դեղերի ցանկում և ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր): Կառավարության 502-Ն որոշման 2-րդ կետը ոչ մի ձևով չի սահմանում, որ գնումների գործընթացի հայտերի գրանցման օրը (ինչի վրա պատվիրատուն շեշտադրում է որպես թերություն) դեղը պետք է ընդգրկված լինի ՀՀ հիմնական դեղերի ցանկում և ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր):

Ավելին, ՀՀ-ում գործող դեղերի մասին օրենքում, գնումների մասին օրենքում, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգերում սահմանված չէ, որ գնումների գործընթացի հայտերի գրանցման օրը դեղը պետք է ընդգրկված լինի ՀՀ հիմնական դեղերի ցանկում և ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

Եթե վերցնենք ՀՀ Կառավարության 25.04.2001թ-ի N 347 որոշման 16-րդ կետը՝

16. Դեղի պետական գրանցման վերաբերյալ որոշման համաձայն՝ դեղի գրանցման հավաստագրի տրամադրումից հետո 30 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

Ընկերությունը հայտնել է, որ եթե ՀՀ կառավարության 502-Ն որոշման 2-րդ կետը սահմանում է, այս կամ այն կերպով, որ հայտերի գրանցման օրը դեղը պետք է ընդգրկված լինի ՀՀ հիմնական դեղերի ցանկում և ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր), ապա, դուրս է գալիս, որ ՀՀ-ում գրանցված դեղը, որը ստացել է գրանցման հավաստագիր, չի կարող մասնակցել գնման գործընթացին, եթե գնումների հայտերի գրանցման օրը ՀՀ կառավարության 347 որոշմամբ սահմանված 30 օրյա ժամկետի մեջ է, սակայն դեռ չի ընդգրկվել Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր), և ներկայացված տեխնիկական բնութագիրը կհամարվի թերի:

Ակնհայտ է, որ ՀՀ Կառավարության 502-Ն որոշումը սահմանում է չափորոշիչներ, որոնցով դեղերը կարող են ընդգրկվել կամ պետք է ընգրկվեն - ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՈՒՄ, և ոչ թե չափորոշիչ որ գնումների գործընթացի հայտերի գրանցման օրը դեղը պետք է ընդգրկված լինի ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր):»:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, մանրամասն ուսումնասիրել Ընկերության կողմից բերված փաստարկները:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ և «Արմֆարմ» ՍՊԸ /կոնսորցիում/-ը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 11.02.2019թ. ժամը 10:50-ին և 21.02.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.02.2019թ. թիվ ԱԴ/06.3/1178-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղեր ձեռքբերելու նպատակով, իրականացվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԶԲ-2019/2» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը 19-րդ չափաբաժնի՝ «վալպրոյաթթու կարգավորվող ձերբազատմամբ թազանթապատ» մասով գնահատվել է անբավարար և մերժվել՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 11.02.2019թ. ժամը 10:50-ին և 21.02.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՅ-ԱՄ-2018/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՅ-ԱՄ-2018/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ

ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 14.01.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը Աճուրդի 19, 22, 23, 24-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.01.2019թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ 19-րդ չափաբաժնի մասով՝ վալպրոյաթթու կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ, կոնսորցիումի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի: Մասնավորապես, կոնսորցիումը ներկայացրել է «Դեպաքրոն» (ծագման երկիրը Բանգլադեշ) դեղը, որը հայտերի գրանցման օրը՝ 08.01.2019թ. գրանցված չի եղել դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր): Նման պարագայում մասնակցի կողմից պետք է ներկայացվի Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված հավելված 2.1 կետով պահանջվող տեղեկատվությունը (նշված պահանջը սահմանվել է նաև հրավերով): Սակայն 19-րդ չափաբաժնի համար կոնսորցիումի կողմից պահանջվող տեղեկատվությունը չի ներկայացվել, որը դիտարկվել է տեխնիկական բնութագրին անհամապատասխանություն:

Կոնսորցիումին 24.01.2019թ. ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 01.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ՝ որ կոնսորցիումի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս; ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.02.2019թ. թիվ 27/26-3/1635-19 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 01.02.2019թ. թիվ ԱԴ/06.3/1178-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԶԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի 23.02.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների

գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Առողջապահության նախարարության կողմից «Առողջապահության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2019/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԶԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 14.01.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ԶԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը Աճուրդի 19, 22, 23, 24-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.01.2019թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ 19-րդ չափաբաժնի մասով՝ վալպրոյաթթու կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ, կոնսորցիումի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի: Մասնավորապես, կոնսորցիումը ներկայացրել է «Դեպաքրոն» (ծագման երկիրը Բանգլադեշ) դեղը, որը հայտերի գրանցման օրը՝ 08.01.2019թ. գրանցված չի եղել դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր): Նման պարագայում մասնակցի կողմից պետք է ներկայացվի Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված հավելված 2.1 կետով պահանջվող տեղեկատվությունը

(նշված պահանջը սահմանվել է նաև հրավերով): Սակայն 19-րդ չափաբաժնի համար կոնսորցիումի կողմից պահանջվող տեղեկատվությունը չի ներկայացվել, որը դիտարկվել է տեխնիկական բնութագրին անհամապատասխանություն:

Կոնսորցիումին 24.01.2019թ. ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 01.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժել է, այն հիմնավորմամբ՝ որ կոնսորցիումի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

ՍՅ-ԱՄ-2019/21 ընթացակարգի քննության շրջանակներում «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 19-րդ չափաբաժնի մասով «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք է հանդիսացել այն, որ տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի, մասնավորապես ներկայացվել է Դեպաքրոն դեղը, որը հայտերի գրանցման օրը 08.01.2019թ. գրանցված չի եղել գրանցամատյանում (ոեեստր):

Միաժամանակ վերջինս հայտնել է, որ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացվել է ոչ թե Դեղերի մասին ՀՀ օրենքով նախատեսված՝ պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղ, ինչպես արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից, այլ «ՀՀ ԱՆ ԷԱԾԱՊՁԲ-2019/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 19-րդ չափաբաժնով նախատեսված՝ Վալպրոաթթու (նատրիում վալպրոատ) կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ (300մգ, valproic acid (valproate sodium) tablets coated controlled-release 300 mg) դեղի համար Ընկերության կողմից ներկայացվել է Դեպաքրոն (valproate sodium (valproic acid) tablets coated controlled-release 300 mg) դեղը, որը ՀՀ-ում գրանցված է եղել 09.12.2013թ-ից մինչև 09.12.2018 թ-ը:

Միաժամանակ Ընկերության տնօրենը հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից գնումների պլանի հաստատման ժամանակ «ՋԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված դեղը ընդգրկված է եղել ՀՀ հիմնական դեղերի ցանկում և պետական գրանցամատյանում (ոեեստր), որի պահանջը սահմանված է կառավարության 502-Ն որոշմամբ:

ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները» հաստատելու մասին որոշման 2-րդ կետի համաձայն՝ **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով հաստատված դեղերի գնումների պլանում ընդգրկվում են** Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում և **Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը**: Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի* ցանկը, դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր) տեղադրված են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական «www.moh.am» կայքում:

Այսպիսով, ուսումնասիրելով գործում առկա նյութերն, արձանագրում եմ, որ կոնսորցիումի կողմից աճուրդի 19-րդ չափաբաժնի համար ներկայացված Դեպաթրոն դեղը, թիվ 13091 գրանցման հավաստագրի համաձայն՝ գրանցվել է 09.12.2013թ. և **վավեր է եղել մինչև 09.12.2018թ.**:

Ըստ Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից armeps.am տեղեկագրում հրապարակված գնումների պլանում վերջին գործարքը՝ գնման առարկա հանդիսացող վալպրոյաթթու դեղի մասով կատարվել է 03.12.2018թ., այսինքն՝ գնումների պլանի հաստատման ժամանակ կոնսորցիումի կողմից ներկայացված դեղի գրանցումը վավեր է եղել:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերության տնօրենը հայտնել, որ 2018թ. նոյեմբերի 23-ին մինչև «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հայտ ներկայացնելը Դեպաթրոն դեղը վերագրանցելու համար ներկայացրել է հայտ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ, սակայն դեղի վերագրանցումը դեղագործակալության կողմից ձգձգվել է:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով կոնսորցիումի վարքագիծը, գտնում եմ, որ նման պայմաններում կոնսորցիումի վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «ԶԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.02.2019թ. թիվ 27/26-3/1635-19 գրությամբ «ԶԻ ԹԻ ՍԻ» և «Արմֆարմ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ